Շնորհ-վաճառքի պայմանագիր
ա/ա.ձև

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար տաս թվականի հունվարի քսանյոթին
ք. Երևան

Մենք՝ « Սայբերտրաստ» ՍՊԸ-ն, իրավաբանական հասցեն՝ ՀՀ Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա, վկայական՝ 03Ա080315 տրված 06.06.2008թ., որի անունից 15.01.2010թ. տրված 01/08 *լիազորագրով գործում է Ռաֆիկ Սիմոնի Դերձյանը,* ծնվ.20.03.1956թ., անձնագիր AE0612103 տրված 04.10.2000թ., 018-ի կողմից, հաշվառված՝ ք.Երևան, Սեբաստիա 3ա-շ.,բն. 14 , հետագայում «Վարձատու » և ՀՀ ԱԱՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն, իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Նալբանդյան 13, որ անունից 27.01.2009թ-ին թիվ 03/504 լիազորագրով գործում է Գարեգին Մարտիրոսյանը, անձնագիր AC0285407 տրված 26.11.1998թ.,003-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 26.11.2013թ., հաշվառված՝ ք.Երևան, Արշակունյաց պող. 30 շ.,բն. 62 , հետագայում՝ « ենթավարձակալ », կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ վարձատուն պարտավորվում է ենթավարձակալի ժամանակավոր, տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը, իսկ ենթավարձակալը պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

Վարձատուն ենթավարձակալին ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնում է Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի, Սեբաստիա 3/7/ երեք կոտորակ յոթ/ հասցեում գտնվող անշարժ գույքից ըստ հատակագծի մասնաշենքի 1-ին հարկի թիվ1-1-4-ը՝ 14,0/ տասնչորս/ քմ., 1-1-5-ը 16,5/ տասնվեց ամբողջ հինգ տասնորդական/ քմ., 1-1-6-ը՝ 78,6/ յոթանասունութ ամբողջ վեց տասնորդական/ քմ., 1-1-7-ը՝ 50,9/ հիսուն ամբողջ ինը տասնորդական/ քմ., 1-1-8-ը՝ 13,3/ տասներեք ամբողջ երեք տասնորդական/ քմ., 1-1-9-ը՝ 15,0/ տասնհինգ ամբողջ/ քմ., 1-1-10-ը՝ 15,0/ տասնհինգ ամբողջ/քմ., 1-1-11-ը՝ 30,5/ երեսուն ամբողջ հինգ տասնորդական/ քմ. մակերեսները, ընդամենը՝ 233,8/ երկու հարյուր երեսուներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ. մակերես, Ամբողջ անշարժ գույքը գտնվում է 0,069039 հա. սեփականություն հանդիսացող հողամասի վրա, այսուհետ՝ «Գույք»:

1.2. Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը վարձակալության իրավունքով պատկանում է վարձատուին վարձակալության (սեփականության/ օգտագործման/ վկայական No2745420 տրված 26.01.2010թ. անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից) և այն ազատ է երրորդ անձանց իրավունքներից(այլ անձանց վաճառված,նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում), որը հաստատված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից 27.01.2010թ. տրված 0143217 տեղեկանքով:

1.4. Ենթավարձակալը նշված անշարժ գույքը օգտագործելու է նպատակային նշանակությանը համապատասխան:

1.5. Վարձավճարի չափը ամսեկան կազմում է 400.000/ չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, վարձավճարը վճարվելու է յուրաքանչյուր ամիս , ոչ ուշ քան հաջորդող ամսվա 10-ը:

1.6. Սույն պայմանագիրը գործում է 01.01.2010թ-ին մինչև 01.01.2013թ.

1.7. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի կետերում կարող են կատարվել փոփոխություններ:

1.8.Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ 3 / երեք/ ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս Կողմին:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

Վարձակալը իրավունք ունի՝

2.1. ենթավարձակալից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.2. ենթավարձակալից պահանջել Գույքը պահել սարքին և պատշաճ վիճակում :

Վարձակալը պարտավոր է՝

2.3 Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո 2/երկու/ օրվա ընթացքում:

2.4. Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.5 . ենթավարձակալին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին:

ենթավարձակալը պարտավոր է՝

2.6. Գույքը պահպանել սարքին վիճակում և օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.7. Կատարել էլեկտրաէներգիայի, ջրի, գազի, հեռախոսային, աբոնենտային և մյուս կոմունալ վճարումները, իրականացնել ենթավարձակալած անշարժ գույքի պահպանությունը,:

Սույն պայմանագիրը կնքված է 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն պայմանագրի կնքման հետ կապված պետ. տուրքի վճարումը կատարվում է Վարձակալի կողմից :

Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա է գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում :

«Վարձատու»

«Ենթավարձակալ»

Երկու հազար տասներեքվեցական թվականի հունվարի քսանչորսին սույն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ Էմմա Շաբոյանիս կողմից:

Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

ՀՀ Քաղ-օր-ի 301 հոդվածի համաձայն,սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30օրվա ընթացքում

Ստորագրողների ինքնությունը և գործունակությունը ստուգված են :

Գրանցված է գրանցամատյանում N 468

Գանձված է պետական տուրք
և ծառայության վճար համաձայն
ՀՀ « Պետական տուրքի մասին »
և « Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար---------- Է.Շաբոյան

ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
НОТАРИАЛЬНЫЙ ДОКУМЕНТ
NOTARIAL DOCUMENT

06941266